ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ջերմուկ **29/մարտի/2018 թ.**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 6 անդամներ:

Բացակա էին՝ Կավկազ Բաբայանը, Սանասար Բաբաջանյանը, Արտակ Բագրատյանը, Արմեն Գրիգորյանը, Արտուշ Սիմոնյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էր
համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետ Արսեն Գառնիկյանը

Նիստը վարում էր Ջերմուկ համայնքի ղեկավարի տեղակալ Սամվել Մարգարյանը

Նիստը արձանագրում էր Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Թադևոսյանը

Լսեցին
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Սամվել Մարգարյան/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 29-ի արտահերթ նիստի հետևյալ *օ ր ա կ ա ր գ ը*.

1.1. Ջերմուկ համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.2. «Ջերմուկ համայնքի «Զատիկ» մանկապարտեզ ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ի ձմեռային այգ. հիմնանորոգում» ծրագրին մասնակցելու և ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացում՝ սուբվենցիա ստանալու համաձայնություն տալու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 32-Ա/

Լսեցին
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Գոհար Թադևոսյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին ենթակետին, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14.3-րդ հոդվածի 9-րդ կետին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1920-Ն որոշման 64-րդ կետին համապատասխան, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի 23.03.2018թ. N 38 դրական եզրակացությունը.

1. Ջերմուկ համայնքի սեփականությունը հանդիսացող, Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 4-րդ փողոցի N 3/1 հասցեում գտնվող 875 քմ մակերեսով բնակավայրերի նպատակային և բնակելի կառուցապատման գործառնական նշանակություններով հողամասի նպատակային նշանակությունը փոխել որպես էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների՝ տրանսպորտի օբյեկտների գործառնական նշանակությամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 33-Ա/

Լսեցին

«ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ «ՋԱՏԻԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՆՈՒՀ» ՀՈԱԿ-Ի ՁՄԵՌԱՅԻՆ ԱՅԳՈՒ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ»; ԾՐԱԳԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Գոհար Թադևոսյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 25-րդ ենթակետի պահանջներով և նկատի ունենալով, որ համայնքի կողմից ֆինանսական ներդրումներ կատարելու պայմանով 2018թ. Հայաստանի Հանրապետության բյուջեից համայնքներին հատկացվելու են նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ՝

1. Համաձայնել ներկայացնելու «Ջերմուկ համայնքի «Ջատիկ» մանկապարտեզ ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի ձմեռային այգու հիմնանորոգում» սոցիալական ենթակառուցվածքների զարգացման ծրագիրը:

2. Սուբվենցիայի ստացման համար գործող կարգով կազմել և ՀՀ Վայոց ձորի մարզպետարան ներկայացնել «Ջերմուկ համայնքի «Ջատիկ» մանկապարտեզ ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի ձմեռային այգու հիմնանորոգում» սոցիալական ենթակառուցվածքների զարգացման ծրագրի ֆինանսավորման հայտը:

3. Սահմանել, որ ծրագրի ներկայացման համար համայնքի 2018 թվականի բյուջեով բավարար ֆինանսական միջոցներ են նախատեսված ծրագիրը իրականացնելու և համայնքի կողմից ներդրում կատարելու համար

4. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 34-Ա/

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն	ստորագրություն
Բաբայան Կավկազ Ջավենի	բացակա
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի	բացակա
Բագրատյան Արտակ Կառլենի	բացակա
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի	
Գևորգյան Արտավազդ Վարազդատի	
Գրիգորյան Արմեն Գրիշայի	բացակա
Համբարձումյան Մխիթար Սամվելի	

Հովհաննիսյան Նարեկ Հարությունի	
Սարգսյան Հասմիկ Ժորայի	
Սիմոնյան Արտուշ Էդվարդի	բացակայում
Ստեփանյան Գագիկ Ստեփանի	

Ջերմուկ համայնքի ղեկավարի տեղակալ՝

ՍԱՄՎԵԼ ՄԱՐԳԱՐՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Գոհար Թադևոսյանը _____